ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող
ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տարբեր երկրների միջև երկարաժամկետ խորը տնտեսական համագործակցությունը հնարավոր է միայն փոխշահավետ պայմանների առկայության պարագայում: Հակառակ դեպքում տնտեսական հարաբերությունները կլինեն փխրուն և անկայուն, իսկ դրանց վերաբերյալ այդ երկրների ազգաբնակչության վերաբերմունքը, ի վերջո, կհանգի շահագործողի և շահագործվողի տրամաբանությանը, որտեղ շահագործվող կողմը անընդհատ կլինի նման կարգավիճակից դուրս գալու ուղիների, իսկ մյուս կողմը՝ նման սցենար թույլ տալու ուղիների շարունակական փնտրտուքի մեջ:

Հայաստանի պարագայում ներկայացված տրամաբանությունը բարդանում է նրանով, որ անմիջական սահմանակից պետություններից ուղիղ կեսի հետ Հայաստանի հարաբերությունները խիստ լարված են, որի պարագայում ազգային տնտեսական քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս առաջնային հրամայական է բոլոր առկա հնարավորություններից օգտվելը: Դա ամենևին չի նշանակում, որ Հայաստանը պետք է տնտեսական հարաբերությունների պահպանման նպատակով գնա վերը նկարագրված սցենարով, այլ ընդհակառակը, ստիպում է համագործակցության այնպիսի եզրեր գտնել, որոնք իրոք կլինեն փոխշահավետ, և հետևաբար՝ երկարաժամկետ և կայուն:

Իրանի հետ Հայաստանի տնտեսական հարաբերություններն ունեն դարերի պատմություն, սակայն, խորհրդային տարիներից հետո ստացել են բոլորովին նոր բովանդակություն: Ուստի, տնտեսական համագործակցության ամենահեռանկարային ուղղությունների բացահայտման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել այդ երկրների տնտեսությունները: Դրանից հետո արդեն կարող ենք պատկերացում կազմել ինչպես այդ երկրների առաջնահերթությունների, այնպես էլ փոխադարձ շահերի և այդ շահերի հնարավոր բախումների վերաբերյալ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի տնտեսական վերափոխումների մասին շատ է խոսվել: Վրա հասած ճգնաժամային վիճակը պայմանավորված էր ոչ միայն տնտեսության արմատական վերակառուցումներով, այլ նաև 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքներով, Ադրբեջանի ագրեսիայով սկիզբ առած ղարաբաղյան պատերազմում Ղարաբաղի Հանրապետությանն անհետաձգելի շարունակական և մեծածավալ աջակցությամբ, տնտեսական շրջափակմամբ և այլն: Սրանց գումարվում էր նաև նախկին շուկաների մեծ մասի կորուստը, բնակչության մեծ թվով արտագաղթը: Հենց այս տարիներին էր, որ փակվեցին երկրում գործող խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, ներդրումների ծավալը գնալով սկսեց նվազել, իսկ աղքատության մակարդակն օրեցօր ավելանում էր: Կարելի է փաստել, որ անցումային շրջանի առաջին մի քանի տարիները մեր երկրի պատմության մեջ ամենադժվարներից էին:

Նկատենք, սակայն, որ 20-րդ դարի երկրորդ կեսն Իրանի համար նույնպես մեծ վերափոխումների ժամանակաշրջան էր: Մինչև 1970-ական թվականները Իրանն առավելապես ագրարային երկիր էր: 1978թ. տեղի ունեցած «Սպիտակ հեղափոխությունը» մեծ փոփոխություններ չբերեց: Արդյունքում, 1979թ. փետրվար-ապրիլ ամիսներին իշխանափոխություն տեղի ունեցավ (իսլամական հեղափոխություն): Ձևավորված Իսլամական Հանրապետության տնտեսության կառուցման հիմնական նպատակը՝ բնակչության մաքսիմալ զբաղվածության և արևմտյան երկրներից տնտեսական անկախության ապահովումն էր[1]:

[1] Иванов М.С. Антифеодальные восстания в Иране в середине XIX века / Главная редакция восточной литературы. –М.: изд-во «Наука», 1982. стр. 135.

Սակայն, 1980-ականներին տնտեսության աճը դադարեց Իրաքի հետ պատերազմի պատճառով: Սկսվեց գյուղերի բնակչության զանգվածային միգրացիան դեպի քաղաք, ինչը կործանարար էր գյուղատնտեսության համար[1]:

Ըստ Իրանի սահմանադրության՝ պետական հատվածին են պատկանում մեքենաշինությունը, արտաքին առևտուրը, նավթաքիմիական արդյունաբերությունը, բանկային ծառայությունները, ապահովագրությունը, էներգետիկան, տեղեկատվական կապուղիները, տրանսպորտը, հեռախոսակապը, փոստը[2]: Իսկ մասնավոր հատվածին ավելի շատ բաժին է ընկնում շինարարությունը, գյուղատնտեսությունը, թեթև արդյունաբերությունը, ծառայությունները և այլն:

Իսլամական հեղափոխությունից հետո հանրապետությունում մեծ թափով սկսեց զարգանալ առողջապահությունն ու կրթությունը: Նոր կառավարությունը խոշոր միջոցներ ուղղեց կրթական համակարգին, որպեսզի հնարավոր լինի արևմտյան մասնագետներին փոխարինել սեփականով և սրանով դիմակայել երկրում տիրող անգրագիտությանը:

1992թ. Իրանը, մեկուսացած լինելով Պարսկական նեղուցի երկրներից, անցավ միջազգային կապերի հաստատմանը Կենտրոնական Ասիայի նորանկախ պետությունների հետ: Այս նպատակով երկրում սկսեցին զարգանալ տրանսպորտային ենթակառուցվածքները՝ ավտոմոբիլային, երկաթուղային ճանապարհները, թունելները և այլն: Միաժամանակ զարգացման մի նոր փուլ սկսվեց մեքենաշինության, ավտոմոբիլաշինության ճյուղերում[3]:

Հայաստանի և Իրանի ընդհանուր տնտեսական շահերի և համագործակցության եզրերի բացահայտման նպատակով ճիշտ կլինի ուսումնասիրել այդ երկրներում տնտեսության հիմնական ճյուղերում տիրող իրավիճակը: Ստորև ներկայացված են Հայաստանում և Իրանում գյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության և արտաքին առևտրի զարգացման ժամանակակից միտումներն ու առանձնահատկությունները:

Գյուղատնտեսություն: Հանդիսանում է տնտեսության հիմնական ճյուղերից մեկը: Ինչպես Հայաստանը, այնպես էլ Իրանը գտնվում են լեռնային գոտում: Հետևաբար, երկու երկրներում էլ չորային կլիմայի, լեռնային ռելեֆի, նաև աշխարհագրական դիրքի պատճառով հողերի մեծ մասը պիտանի չեն գյուղատնտեսության համար:

Մեր երկրում համեմատաբար խոշոր վարելահողերը գտնվում են Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, Շիրակի մարզում: Աճեցվող հիմնական կուլտուրաներն են՝ բանջարաբոստանային, կարտոֆիլ, ցորեն, խաղող, պտղատու բազմապիսի ծառեր: Ջերմոցներում հիմնականում աճեցնում են ծաղիկներ և բանջարեղեն:

Ինչ վերաբերում է հարևան պետությանը, ապա պետք է նշել, որ ամենազարգացած գյուղատնտեսությունն ունի երկրի Հյուսիսային շրջանը, որը հայտնի է նաև Մերձկասպյան անունով: Այն ընկած է երկրի խոնավ, մերձարևադարձային շրջանում: Առատ տեղումներն ու մեղմ ձմեռները հնարավորություն են տալիս աճեցնելու տարբեր տեսակի մշակաբույսեր՝ մասնավորապես բրինձ, թեյ, բամբակեղեն, ծխախոտ, ցիտրուսներ, շաքարի ճակնդեղ, շաքարեղեգ, ափիոնի կակաչ, յուղատուներ: Զարգացած են նաև այգեգործությունն ու բանջարաբուծությունը[4]:

Կոոպերատիվների և գյուղատնտեսական բանկի միջոցով գյուղատնտեսությամբ զբաղվողները պետությունից ստանում են զգալի աջակցություն արտոնյալ վարկերի, ցածր արժեքով վառելանյութի, գյուղատնտեսական տեխնիկայի և սերմերի տեսքով: Տրամադրվող սուբսիդիաների մեծ մասն ուղղվում է ցորենի աճեցմանը, քանի որ վերջինս կազմում է իրանցիների սննդակարգի հիմնական մասը:

Մեր երկի կառավարությունը նույնպես մեծ ուշադրություն է դարձնում այս հարցին: Գյուղացիներին տրամադրում է գյուղատնտեսական վարկեր և սուբսիդիաներ՝ համապատասխան պայմաններով ու տոկոսադրույքներով:

---

[1] Иран: История и современность /Под ред. Л.М.Кулагиной, Н.М.Мамедовой; Сост. И.Е.Федорова, Л.М.Раванди-Фадаи. – Москва, ИВ РАН, Центр страт. Конъюнктуры, 2014, стр. 62.

[2] Конституция Исламской республики Ирана, http: //legalportal.am/download/constitutions/105_ru.pdf

[3] Иран: История и современность /Под ред. Л.М.Кулагиной, Н.М.Мамедовой; Сост. И.Е.Федорова, Л.М.Раванди-Фадаи. – Москва, ИВ РАН, Центр страт. Конъюнктуры, 2014, стр. 219.

[4] Анализ состояния экономики Исламской Республики Иран и перспективных направлений сотрудничества для российского бизнеса. Омск. 2015, стр. 10.

Եթե մեր հանրապետությունը հայտնի է իր քաղցրահամ և էկոլոգիապես մաքուր միրգ ու բանջարեղենով, անարատ մեղրով, ողջ աշխարհում ճանաչում գտած բարձրակարգ կոնյակով, հանքային ջրերով, ապա Իրանը հայտնի է իր համեմունքներով(շաֆրան, չաման), բուսական բուժիչ նշանակություն ունեցող բույսերով, արմավով: Իրանը համաշխարհային շուկա փյունիկյան արմավի (խուրմայի) խոշոր մատակարարն է: Այստեղ տարեկան կտրվածքով արտադրվում է 12.մլն. տ. բանջարեղեն և 8 մլն.տ. պտուղներ, որի մի մասն արտահանվում է: Իրանից գյուղատնտեսական արտադրանք ներմուծվող երկրների շարքում է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Արդյունաբերություն: Անկախության ձեռքբերումից հետո, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց ճգնաժամային իրավիճակում: Սա իր անմիջական արտացոլումը գտավ տնտեսության վրա: Երբեմնի խոշոր արդյունաբերական երկիրը կորցրեց իր արդյունաբերական հզորությունը: Առանց նավթի, գազի և ծովային ելքի այս իրավիճակը երկրում ավելի արմատավորվեց:

Իր հերթին Իրանի արդյունաբերության վրա բացասաբար անդրադարձավ ութ տարուց ավել տևած Իրանա-իրաքյան պատերազմը: Իսլամական հեղափոխությունից հետո օտարերկրյա կապիտալից տնտեսության կախվածությունը խիստ թուլացավ: Տիրապետող դարձան իրանական պետական և մասնավոր ընկերությունները[1]:

Այսօր նավթարդյունաբերությունը երկրի տնտեսության զարգացման մեջ ամենաառաջնային և գլխավոր դերում է: Իրանը նավթի արդյունահանմամբ ողջ աշխարհում առաջին հնգյակի մեջ է մտնում և համարվում է ամենախոշոր արտահանողներից մեկը(նավթի պաշարները գնահատվում են մոտ 14 մլն.տ., կամ համաշխարհային պաշարների 9%-ից ավելին): Երկրի ընդերքում հայտնաբերված են քարածուխ, ուրան, սև և գունավոր մետաղներ, մասնավորապես պղինձ, (Սարչեշմեյի հանքավայր), կապարի, ցինկի, երկաթի(հյուսիս- արևմուտքում և կենտրոնական մասում), մանգանի, քրոմի, մոլիբդենի, բազմամետաղների հանքավայրեր[2]: Առկա են շինանյութերի, հատկապես վարդագույն և մոխրագույն դիորիտների, հասպիսի, կավի պաշարներ:

Վերջին տարիներին արագ տեմպերով սկսել է զարգանալ ավտոմոբիլային մեքենաշինությունը: Խոշոր արդյունաբերական ընկերությունը՝ Iran Khodro Industrial–ը, թողարկում է մարդատար ավտոմեքենա Samand X 7: Այս բնագավառում Իրանը սերտորեն համագործակցում է ֆրանսիական մեքենաշինական կոնցեռնների հետ[3]:

Արագ զարգացող ճյուղերից է նաև քիմիական արդյունաբերությունը, որը թողարկում է նավթաքիմիայի արտադրանք, պարարտանյութեր, պլաստմասսա, լվացքի փոշի և այլն: Հիմնական կենտրոններն են Աբադանը, Սպահանը և Թեհրանը:

Հայաստանում քիմիական արդյունաբերության ոլորտում, նշենք գործող հսկաներից մեկի՝ «Նաիրիտ» ԲԲԸ-ի մասին, որը հսկայական համակարգող դեր ունի տնտեսությունում: Նվազ նյութատարությամբ և էներգատարությամբ առանձնանում է փոքր քիմիայի արտադրությունը (ներառում է դեղորայքի և վիտամինների արտադրությունը): Ինչ վերաբերում է թեթև արդյունաբերությանը, ապա այստեղ թողարկվում են բազմապիսի և տարատեսակ ապրանքներ: Հիմնված են նոր և ժամանակակից տեքստիլ, տրիկոտաժի, կարի և կոշկեղենի արտադրություններ, որտեղ թողարկվում են սպիտակեղեն, ներքնազգեստներ, բամբակյա և մետաքսյա կտորեղեն, գուլպաներ և զուգագուլպաներ, կոշկեղեն և այլն: Պետք չէ մոռանալ նաև հայկական բարձրորակ գորգերի մասին, որոնք իրենց արտաքին տեսքով և որակական հատկանիշներով չեն զիջում միջազգային շուկայում մեծ ճանաչում և բարձր արժեք ունեցող պարսկական գորգերին:

Վերջին տարիներին երկու երկրներում էլ մեծ թափով սկսեց զարգանալ ՏՏ ոլորտը: Ըստ հավաստի աղբյուրների մեր երկրում այսօր գործում են 197 կազմակերպություններ, որոնցից 125-ը տեղական են, իսկ 72-ը արտասահմանյան կազմակերպությունների մասնաճյուղեր: Ոլորտում ընդհանուր զբաղվածների թիվը կազմում է մոտ 5000 մարդ: Ոլորտի ընդհանուր արտադրողա-

---

[1] Чернова А.Ф., Ирано-иракская война 1980-1988гг.: подходы монархий персидского залива. –журнал Общество, среда, развитие, #18, 2013. ст. 96-100.

[2] Справочникэкспортера: Иран 2015, стр. 5.

[3] Анализ состояния экономики Исламской Республики Иран и перспективных направлений сотрудничества для российского бизнеса. Омск. 2015, стр. 28.

կանությունը կազմում է 31.500 մլն ԱՄՆ դոլար: Այս տեղեկատվությունը վերաբերում է միայն ոլորտի հաշվառված հատվածին, իսկ իրականում ոլորտի ծավալները գրեթե կրկնապատիկին մոտ են:

Արտաքին առևտուր: Արտաքին առևտուրը ցանկացած երկրի տնտեսության կարգավորման կարևորագույն գործոններից մեկն է, որը թույլ է տալիս հայտնաբերել տնտեսության թույլ կողմերը և որոշել դրանց վերացման ուղղությունները: Վերջին մի քանի տարիներին Հայաստանի առևտրային գործընկերներն են հանդիսացել.

1. արտահանման գծով՝ Չինաստանը (13.6%), Գերմանիան (11.8%), Իրաքը (9.5%), Կանադան (8.8%),
2. ներմուծման գծով՝ Ռուսաստանը (22.3%), Չինաստանը (10.2%), Իրանը (7.0%), Գերմանիան (6.8%):

Իրանի Իսլամական Հանրապետությունն առևտրային կապերի մեջ է աշխարհի մոտ 178 պետությունների հետ: Արտահանման ենթակա ապրանքատեսակների թիվը, բացառությամբ նավթի ու նավթամթերքի, ներառում է 3449 տարատեսակ ապրանքներ, ինչը վկայում է Իրանի արտահանման բարձր ցուցանիշների մասին:

Իրանից արտահանվող հիմնական ապրանքներն են՝ նավթ և նավթամթերք, պոլիէթիլեն, նավթային գազեր և գազանման ածխաջրածիններ, հանքային պարարտանյութեր, պարսկական գորգեր, բուրդ, բամբակ, կաշի, արդյունաբերական սահմանափակ արտադրանքներ: Հիմնական երկրները, դեպի ուր արտահանվում են պարսկական ապրանքները՝ Չինաստան է, Թուրքիան, Հնդկաստանը, Ճապոնիան, Հարավային Կորեան, Թայվանը, Օմանը, Ռուսաստանի Դաշնությունը, Գերմանիան: Առևտրային գործընկերներն, ում հետ Իրանը սերտորեն համագործակցում է և որտեղից ներմուծվում են ապրանքներ, հիմնականում Չինաստանն է, Հնդկաստանը, Հարավային Կորեան, Թուրքիան, Գերմանիան, Բրազիլիան, Իտալիան, Արգենտինա, Մալազիան, Ռուսաստանը[1]:

Վերջին տարիներին Հայաստանից արտահանումների ծավալի աճ է նկատվում, հատկապես գյուղատնտեսական ապրանքների գծով: Լավ նախադրյալներ կան և ակտիվորեն զարգանում են հայ-իրանական առևտրական, տնտեսական, մշակութային և գիտական կապերը: Հայաստանի և Իրանի քաղաքական գիտամշակութային և այլ կապերի զարգացման հնարավորությունները շատ մեծ են:

Տրանսպորտը: Դեպի Հայաստանի Հանրապետություն բեռնափոխադրումներն իրականանում են երկու հիմնական ճանապարհով՝ Վրաստանով (Այրում-Սադախլու և Բագրատաշեն – Սադախլու անցակետերով) և Իրանի միջոցով (Ագարակ-Նորդուզ անցակետով): Վրացական սևծովյան նավահանգիստներից Փոթին և Բաթումին հանդիսանում են ամենամոտը Հայաստանի համար՝ դեպի ծովային ելք ունենալու առումով: Գործող երկաթուղին հնարավորություն է տալիս մատչելի գներով և անվնաս բեռնափոխադրումներ իրականացնել դեպի վերը նշված նավահանգիստները:

Այսօր ՀՀ-ից բեռնափոխադրումները Ռուսաստան և ԱՊՀ երկրներ իրականանում են Վերին Լարսի անցակետով, սակայն, ձմեռվա ամիսներին այս ճանապարհը բավականին վտանգավոր և դժվարանցանելի է[2]: Խոսելով ավտոճանապարհներից ուղղակիորեն չենք կարող չխոսել «Հյուսիս - Հարավ» ավտոմայրուղու մասին, որը կապում է երկրի հյուսիսը հարավի հետ: Սա ևս մի միջոց է Իրանի հետ սերտ համագործակցելու համար:

Ավտոմոբիլային տրանսպորտի դերն Իրանում բավականին մեծ է, քանի որ ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է ավելի քան 170 հազ. կիլոմետր և դրանցով իրականացվում են բեռնափոխադրումների 83%-ից ավելին: Երկրի հյուսիսը հարավի հետ կապող գլխավոր մայրուղիներն են՝Թեհրան-Սպահան-Ահվազ, Թեհրան-Յեզդ-Քերման-

[1] Основные направления социально-экономической политики правительства М.Ахмадинежада, Мамедова Н.М., Иран при М.Ахмадинежаде. Памяти А.Арабаджяна. – Москва.: ИВ РАН, 2013, с. 43.

[2] Развитие транспортной отрасли Армении в рамках Таможенного союза.Сурен Чибухчян, Армен Казарян.

Բենդեր-Աբբաս և Սեմման-Քերման մայրուղիները: Մյուս կարևոր տրանսպորտային փոխադրամիջոցը, դա երկաթուղին է: Երկաթգծերի ընդհանուր երկարությունը կազմում է 10407 կմ[1]:

Քանի որ Իրանը գտնվում է երկու ծովերի միջև, այստեղ լայնորեն օգտվում են նաև նավագնացությունից: Իրանական առևտրային նավատորմում հաշվվում է 138 նավ: Օդային տրանսպորտի առումով, հարկ է նշել, որ երկրում գործում է թվով 321 օդանավակայան՝ տարեկան ավելի քան 25 մլն. ուղևորափոխադրման ընդհանուր ծավալով: Ամենամեծ ավիափոխադրողը դա «Իրան էյր» ընկերությունն է, որը սակայն, չի կարողանում բավարարել պահանջարկը: Ինչ վերաբերում է մեր երկրում օդային տրանսպորտին, ասենք, որ ցավոք այս պահին ազգային փոխադրող չունենք, սակայն, այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում:

Շինարարություն: Վերջին տարիների ընթացքում Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել ճանապարհաշինարարության ոլորտում՝ հատկապես կենտրոնական և գյուղական ճանապարհների բարելավման կամ վերանորոգման հարցում: Շատ ճանապարհների վերականգնման ֆինանսավորումը կատարվել է միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից:

Բնակարանաշինարարության բնագավառում ամենամեծ աճը գրանցվել է 2006-2008թթ.: Այս տարիներից հետո գրանցված միջազգային ճգնաժամն իր ազդեցությունը թողեց այս բնագավառի վրա:

1970-2013թթ. շինարարությունն Իրանում աճել է 22.1 մլրդ. դոլարով: Տեմպերի նման ավելացումը պայմանավորված է բնակչության ավելացման հետ: Իրանում շինարարության միջին տարեկան աճը կազմել է 114%: Շինարարության մինիմալ չափն այստեղ գրանցվել է 1970 թվականին (0.45 մլրդ. դոլար), իսկ ամենամեծ աճն այս ոլորտում՝ 2012-ին(26.9 մլրդ.դոլար)[2]: Օրեցօր ավելանում բարձրահարկերի թիվը: Տեղի ղեկավարությունը հայտարարում է, որ ողջունում է օտարերկրյա ընկերությունների մասնակցությունը, որոնք ներդրումներ են կատարում բնակարանաշինության մեջ և ոչ միայն: Խրախուսվում է նաև արտասահմանյան գործընկերների մասնակցությունը, որոնք նորագույն տեխնոլոգիաներ են կիրառում շինարարության ոլորտում: Օրինակ, համեմատաբար նոր քաղաքներում՝ Պարանդում և Խաշտգերդում, նոր տեխնոլոգիաների կիրառմամբ հանդես են գալիս մալազիական և հարավ-կորեական ընկերությունները[3]:

Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տնտեսության որոշ ճյուղերի համեմատությունը ցույց է տալիս, որ նշված երկրների միջև կան տնտեսական համագործակցության լայն եզրեր: Հայաստանի և Իրանի աշխարհագրական և բնակլիմայական ընդհանրություններն ու տարբերությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ փորձի փոխանակումը, փոխլրացնող և շարունակվող արտադրական ցիկլերի կազմավորումը, սեզոնային ապրանքների մատակարարումը, տարբեր տարածաշրջանների շուկաների մուտքի ապահովումը տնտեսական համագործակցության միայն սահմանափակ թվով ուղղություններն են: Միաժամանակ, սխալ է կարծել, թե տնտեսական փոխադարձ շահը ինքնին բավարար է ենթադրելու, որ այդ համագործակցությունը մեխանիկորեն կհաստատվի: Հենց միայն լեզվային խնդիրները, մշակութային և տնտեսվարման ավանդույթների տարբերությունները, տրանսպորտային խոչընդոտներն ու երկու երկրներում երկարաժամկետ տնտեսական անկայունությունը բավարար են, որ տնտեսական համագործակցությունը լինի երկչոտ և դանդաղկոտ: Հետևաբար, անհրաժեշտ են հատուկ մեխանիզմներ, որոնք թույլ կտան արագացնելու ինտեգրված տնտեսական ենթակառուցվածքների ձևավորումն ու երկու երկրների միջև սերտ տնտեսական համագործակցությունը:

---

[1] http://www.amar.org.ir/english/Statistics-by-Topic/Transport#2226538-time-series - Length of Railways (Kilometer)

[2] http: //www.be5.biz/makroekonomika/construction/construction_iran.html

[3] http: //ukrbuild.dp.ua/2011/10/23/iran-stroitelnaya-industriya.html

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող
ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Տարբեր երկրների միջև երկարաժամկետ խորը տնտեսական համագործակցությունը հնարավոր է միայն փոխշահավետ պայմանների առկայության դեպքում: Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տնտեսության որոշ ճյուղերի համեմատությունը ցույց է տալիս, որ նշված երկրների միջև կան տնտեսական համագործակցության լայն եզրեր: Սակայն, միայն լեզվային խնդիրները, մշակութային և տնտեսավարման ավանդույթների տարբերությունները, տրանսպորտային խոչընդոտներն ու երկու երկրներում երկարաժամկետ տնտեսական անկայունությունը բավարար են, որ տնտեսական համագործակցությունը լինի երկչոտ և դանդաղկոտ: Հետևաբար, անհրաժեշտ են հատուկ մեխանիզմներ, որոնք թույլ կտան արագացնելու ինտեգրված տնտեսական ենթակառուցվածքների ձևավորումն ու երկու երկրների միջև սերտ տնտեսական համագործակցությունը:

Բանալի բառեր. *Իրան, տնտեսություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, արտաքին առևտուր, համագործակցություն:*

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЭКОНОМИКИ АРМЕНИИ И ИРАНА

АЙК АШОТОВИЧ МАРКОСЯН, *к.э.н.*
старший научный сотрудник Института эономики им. М.Котаняна НАН РА
АРМИНЕ ГАГИКОВНА МИНАСЯН, *к.э.н.*
младший научный сотрудник Института эономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Долгосрочное глубокое экономическое сотрудничество различных стран возможно только при наличии взаимовыгодных условий. Сравнение некоторых отраслей экономики Исламской Республики Иран и Республики Армения показывает, что между этими странами существуют широкие горизонты экономического сотрудничества. Тем не менее, только языковые проблемы, различия культурных и хозяйственных традиций, транспортные барьеры и долгосрочная экономическая нестабильность в обеих странах достаточны, чтобы экономическое сотрудничество оказалось робким и неспешным. Следовательно, необходимы специальные механизмы, позволяющие ускорить формирование интегрированной экономической инфраструктуры и тесное экономическое сотрудничество между двумя странами.

Ключевые слова: *Иран, экономика, промышленность, сельское хозяйство, строительство, транспорт, внешняя торговля, сотрудничество.*

THE COMAPARTIVE ANALYSIS OF ECONOMIES OF ARMENIA AND IRAN

HAYK ASHOT MAKROSYAN, *Candidate of Sciences (Economics)*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
ARMINE GAGIK MINASYAN, *Ph.D. in Economics*
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Deep long-term economic cooperation between different countries is possible only on mutual and beneficial terms. Comparison of Islamic Republic of Iran and the Republic of Armenia in certain sectors of the economy shows that broad cooperation linkages between these countries exist. However, the language problems, cultural differences and traditions of economic management, long-term economic instability of transport barriers and the long-term economic instability in the two countries are enough for the economic cooperation to be timid and tardy. Therefore, there is a need for special mechanisms to speed up the formation of integrated economic infrastructure and closer economic cooperation between the two countries.

Keywords: *Iran, economy, industry, agriculture, construction, transport, foreign trade, cooperation.*